ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կարիքների համար ***էլեկտրական պարագաների*** ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2025/02**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» նոյեմբերի 2025թ.

Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Սոնա Դարբինյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջազգային համագործակցության վարչության փորձագետ

հանձնաժողովի անդամներ՝

Սուրեն Էյրամջյան՝ «ԱՏԳ» Փակ Բաժնետիրական Ընկերության գլխավոր ինժեներ

Նարեկ Թադևոսյան՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի ցանցային մասնագետ

Արտյոմ Մեսրոպյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի պետ

Հայկ Հովսեփյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. ***Տեղեկատվություն Մարիետա Աբրահամի Սարգսյան Ա/Ձ-ի կողմից պայմանագիրը չստորագրելու, որակավորման և պայմանագրի ապահովումները ՀՀ ԲՏԱ նախարարություն չներկայացնելու և պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու վերաբերյալ:***

«**ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2025/02**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2025թ.-ի որոշման համաձայն ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչված /հայտարարված/ **Մարիետա Աբրահամի Սարգսյան Ա/Ձ-ին** անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագրի շնորհում և վերոնշյալ ԱՁ-ի էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև «**ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2025/02**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 9.5-րդ կետով սահմանված ժամկետում **Մարիետա Աբրահամի Սարգսյան Ա/Ձ-ն** չի ստորագրել պայմանագիրը և նախարարություն չի ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «**ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2025/02**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 9.5-րդ կետի պահանջները **Մարիետա Աբրահամի Սարգսյան Ա/Ձ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:**

2. **Տվյալներ՝ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2025/02»** ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ **չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցրած և ընտրված մասնակցի վերաբերյալ:**

Ղեկավարվելով Հրավերի ՄԱՍ 1-ի 8.20 կետի պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.
-ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ **Վահե Խաչատրյան Հայկի Ա/Ձ-ին**

Ընդունվել է որոշում՝ Կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովը որոշեց՝
-Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
-ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել համապատասխան պայմանագիրը:

Հանձնաժողովի՝

Նախագահ

_____ **Սոնա Դարբինյան**

Անդամներ

_____ **Սուրեն Էյրամջյան**

_____ **Նարեկ Թադևոսյան**

_____ **Արտյոմ Մեսրոպյան**

_____ **Հայկ Հովսեփյան**

Քարտուղար՝

_____ **Օֆելյա Ասատրյան**